Տէրտէրը, որպէս երեւում էր, առաջուց գիտէր Ասլանի նոյն ժամուն իր տունը գալը, գիտէր նաեւ, թէ որտեղից է գալիս նա: Ես իսկոյն հասկացայ, որ Ասլանը եւ «գիժը» նախածանօթներ էին, գուցէ շատ մօտ բարեկամներ: Բայց ի՞նչ գործ ունէր խելացի Ասլանը «գժի» հետ:

Տէրտէրը բաւական բարձրահասակ եւ ցամաք մարդ էր. նրա կազմուածքի բոլոր գծերից երեւում էր վայրենութիւն: Ինչ որ աւելի սարսափելի էր եւ անախորժ, էր նրա ձայնը, որ խօսելու միջոցում որոտում էր: Նրա ձախ ձեռքի երեք մատները կտրած էին, երեւի թրով, իսկ գլխի ու պարանոցի վրայ նոյնպէս վէրքի նշաններ կային: եթէ Ասլանը չասէր ինձ, թէ նա քահանայ է, ես կը համարէի «գժին» մի աւազակ, որ իր ամբողջ կեանքը անցուցել էր յափշտակութիւններով եւ մարդասպանութեամբ:

Հէնց որ մտանք «դիւանատունը», նա մօտեցաւ մի պատուհանի, վարագոյրը ետ քաշեց եւ այնտեղից դուրս բերեց մի ահագին շիշ լիքը արաղով. նախ լեցրուց ինքը խմեց, յետոյ տոեց Ասլանին, եւ ապա ինձ առաջարկեց, ասելով.

— Ա՛ռ խմիր, ոսկորներդ կպնդացնէ, յոգնած ես:

Տեսնելով ահագին բաժակը, ես սարսափեցայ:

— Արաղ խմելու սովորութիւն չունեմ, — ասեցի:

— Ինչո՞ւ, տիրացու, — հարցրեց նա, իր սոսկալի աչքերով ուղիղ իմ երեսին նայելով:

— Տիրացու չէ, — պատասխանեց Ասլանը:

— Բայց շատ նման է, — ասաց նա հեգնական ձայնով:

— Մենք նրան տիրացութիւնից ազատեցինք, — պատասխանեց Ասլանը խորհրդական ձայնով:

— Այդ լաւ է... — խօսեց նա եւ մօտեցաւ մի ուրիշ պատուհանի: — Ես կը տամ քեզ «կարմիր հարսի արաղ», — ասաց նա եւ դուրս բերեց վարագոյրի ետեւից մի ուրիշ շիշ, լցրած դեղնագոյն ըմպելիքով:

Ես նրանից խմեցի, որովհետեւ բաւականին քաղցր էր եւ ախորժելի: Յետոյ տէրտէրը մօտեցաւ լուսամուտին եւ ձայն տոեց:

— Տիրօխնի, սատանան քեզ տանի, որտե՞ղ ես կորէ:

Իսկոյն յայտնուեցաւ մի կարճլիկ հասակով կին, եւ սկսեց Ասլանի հետ բարովել: Դա տէրտէրակինն էր, բաւականին համակրական մի կին:

— Գնա՛յ, այդ նոր հիւրի երեսն էլ պաչիր, քոռացած, — ասաց «գիժը» իր կնոջը: